ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA
ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-45
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ Պ/Ա/398
"02" 02 2018

«Վիոլա» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Մեժլումյանին
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Աճառյան փ. 2-րդ նրբ, թիվ 3
էլ. հասցեն՝ viola@arminco.com
ՀՎՀՀ՝ 00801026

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն, Ձեր ընկերությունը ի թիվս այլ ապրանքատեսակների՝ պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.11.2017թ մատակարարել 30 հատ «Պլազմաֆերեզի "MCS+9000 System" ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»՝ 1,668,000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ին միակողմանի՝ «Պլազմաֆերեզի "MCS+9000 System" ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքատեսակի մասով լուծում է ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել 40,866 (քառասուն հազար ութ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ից կգանձվի նաև վերը նշված պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 343,540 (երեք հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ